

ՀԱՅՈՒ ՀԱՅՈՒՆԵՐԻ  
ՀԱՅ

# ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ



ԵՐԿՐՈՐ ՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ  
ԱԼՈՎԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐ ԾԱՐԵՐՈՒ

ՖԱՐԵՐՈՒ ԿՐԵՇ  
ՀՈՒԽ ԶԱՅՆԸ Փ Փ  
ՔԱՋՈՒՄԻՆ ԲԻՓՈՐԸ<sup>Ը</sup>  
ԱՆԴՐԱՆԻԿ Փ Փ Փ  
ԱՐԱԿԻՐ ԱԵՐՈՐ - Փ  
ԱՐԻՈՒՅՆ ՀԱՅՐԻՉ Փ  
ՀՈՎԿԱՆ Փ Փ Փ

ՀՐԱՎԱՐՈՒԹԻՒՆ  
ՀԱՅ ԱՎԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՒՆԵՐԻ ՄԱՅԻՆ

1909 Խ. Պալիս

891.99

Ա-47

~~of Gorgon~~  
symfori

891.99  
U-47

12 MAR 2011

Ա.ՏՕՄ ԷԱՐԱՍՆԵՑԱՆ

Արմանիս

# ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՇԱՐԺԵՐՈՒ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1908

13904



30 JUL 2013

59983

ԴԱՐԵՐՈՒԻ ՎՐԵԺ



7356-73

## Ա.

ՅՈՅՍԵՐՈՒ երկաթէ սամղուխին կատարներէն է որ  
աւետիսս կ'արձակեմ,  
Մոխիբներու, դիակներու և վշտերու հովիտներէն է  
որ հասայ ի քեզ,  
Եւ, աւա՛ղ, քղամիդիս թեղանիքներէն իմ շքեղ  
ցեղիս արիմնը ահաւասի՛կ դեռ կը թորայ...  
Բայց քայլերս անխոնջ են և կամքս գերազօր և  
ձայնս դաժանորէն ամենի...  
Գլուխս սուգերէն և վրէժէն և ճակատագրէն թէն  
ալեհեր,  
Բայց, տե՛ս, աչքերս դիւցաղնի մը աչքերուն չափ  
կարմիր և կերպարանքս է սոսկատեսիլ:  
Իմաստութեանս և ցասումիս արեգակին տակ իմ  
հուժկու իրանս անկիւնաքար,

Այլևս չուզեր այդ անոտի վասոքը յաւերժօրէն իր  
վրայ կրել:  
Եւ պաղատանքի, աղօթքի, լաց ու կոծի և ողբի  
այն մատեաններուն մէջ,  
Որ դար առ դար իմ սերունդներս իրենց արիմնը և  
տառապանքն են լացեր,  
Մէկ կողմ նետեցի ես զանոնք, պարտութենէ սար-  
կացում և աղաչանքէ արցունք չերթալու հա-  
մար...  
Եւ մտածումովս և զայրոյթովս ձեր ցաւերուն ամե-  
նախոր արմատները չափեցի.  
Տեսա՛յ որ ձեր փրկութիւն մուրացողի բովիկ ոտ-  
քերն աւերակներու մոխիբներէն այրեցան...  
Տեսա՛յ որ դուք արցունքին մէջ երջանիկ էիք և  
կենսարեր կոխին դէմ ահարեկ...  
Տեսա՛յ որ արդարութիւնը ստեղծել պէտք էր և  
աղատութիւնը մոլեգնաբար յափշտակել:  
Եւ այսօր, ահաւասի՛կ, իմ անկշռելի բարկութիւնս  
իր բոլոր հուրերը վառեց...

«Ահա՛ քեզ ալ կը դիմեմ, եկո՛ւ և ճամփուս վրայ  
ոտքի՝ երգէ՛ որ արձակե՛մ,

Ճամբուս վրայ ռազմերգէ՛ որ քինայոյգօրէն և առայաւէտ արձակե՛մ  
Իմ հաւատքի զաւկըներուս վայրենալանջ երիշար-ները փոթորկապար...  
Էսէ՛, որ գաղափարիս փարոսները հրդեհեմ չորս ծագերուն դիմաց,  
Էսէ՛, որ թաւալե՛մ ապառաժներուս կոյտերը անիւրաւութեան կուրծքերուն,  
Եւ ոտքի հանեմ հողիս հրեղէն և ըմբոստ մարտիկ-ներուն հետ,  
Քինախնդրութեան և սարսափի բանակներուս արշաւանքն ալ ահեղաշար...  
Էսէ՛, որ շեփորներս հինաւուրց հերոսներու հագաւգովը շեփորներէ...  
Էսէ՛, որ երկաթներս կուանեմ և պողպաններս շողացնեմ,  
Էսէ՛, որ ես ալ իմ արիւնախում նժոյգս շքեղօրէն թամբեմ,  
Էսէ՛, որ անոր սմբակները ձորերէն վեր՝ լեռնէ ի լեռ միայն կայծեն...  
Երգէ՛, ահա, բոլորին արիւնը արեւ է զարձեր և կամքերն ու դաստակներն է պղնձուեր.

Երգէ՛, Եղբայրութիւնը տօնուեցաւ և շունչերն ու հո-գիները նոյն դարերու վրէժովը պսակուեցան...  
Ահա՛ թափուող արցունքները յի՛տ դարձան և կուրծքերու կոծումը դադրեցաւ,  
Ահա՛ բոլորը մէ՛կ, բոլորը մէ՛կ, իմ Գերիշխանի թեւ-ւերուս տակ յառաջացան.  
Սրբեցո՛ւր զանոնք դեռ, եթէ կրնաս, և արժանաւ-րար դիւցազներդէ՛ զիս ով քնարաւոր,  
Ես զիտեմ որ քուտաւիլդ Հայրենիքին ծարաւն ունի լնչպէս վրէժն այնքան դարերու...  
Ուրեմն լարերդ զենիթին շանկթերէն յակատակէ, արձակ առ արձակ,  
Բարձրացո՛ւր ձեռքերդ և զանոնք զիշերուան կա-պոյտներու կամարին կարկառէ՛,  
Եւ փառազարդէ զլուխս առաւօտեան աստղերու բոյլով մը լուսածոր,  
Խնկարկէ՛ զիս և անմանութեան տաճարներուն էն փառակերտը կառուցո՛ւր,  
Ծնրադրէ՛ և պաշտէ՛ զի՞ս՝ և երբ ժամը համար ող-ջակիղուէ՛ լնծի համար,  
Եւ փշէ՛ քու հողեղէնի ճակատդ իմ կոթողիս մար-մարներուն դիմաց,

Որովհետեւ . Ես ե'մ , Ես ե'մ , Ես ե'մ , իմ անունս է  
Պայքար և վախճանս Յաղթանակ» :

1902 Փընէլ

## ՀՈՂԻՆ ԶԱՅՆԸ

ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ  
ՅԻՒԱՏԱԿԻՆ ՀԱՄԱՐ



Մահաղանգերու երկաթեղէն մըրկումի մը հանգոյն՝  
Վըէժով ու ցասումով առլցուած, գերագոյն մար-  
տահրաւէրը կ'աղաղակէր . . . .

Ու ահաւասի'կ ձեզի մահաբոյր արձագանքն իր փր-  
կարար խօսքերուն .

## Բ.

ԸՍԷ Ք, ի՞նչ է այն զարհուրանքը, ո՞վ սուգերու և  
ատելութեան ընկերներ,  
Որ նորէն տառապանքի, յոյսի և քանդումի քա-  
ղաքներուն վրայ,  
Այս իրիկուն, ինձի կ'ըսեն, թէ բոցավառուող սու-  
րերու հետ պիտի իյնայ,  
Ի՞նչ է այն զարհուրանքը, ո՞վ սուգերու և ատելու-  
թեան ընկերներ :

Ու խօսող ձայնը յաւիտենական մաքառումներու Հո-  
ղին ձայնն էր,  
Որ իր աւերակէ բերանները գէտի վեր՝ հորիզոննե-  
րուն,

— Ո՞վ քաղաքներէս և երկինքէս հալածուած թա-  
փառական զաւկըներ,

Մտիկ ըրէ՛ք, այս իրիկուն, ձեր հինաւուրց և ար-  
գաւանդ և այրի հողին՝

Ատելութիւնով, հեծկլտանքով և հոգեվարքով յղի,  
Սա քինայոյդ ու արիւնոտ ու յուսահատ հրաւէրը  
պաղատագին . . .

Եւ եթէ կ'ուղէք որ ձեր վաղնջական աղքը դեռ  
տեէ,

Եթէ կ'ուղէք որ երկիրը անգամ մըն ալ ինքն իր  
մէջը չի քանդուի,

Եթէ կ'ուղէք որ աղատութեան հերոսները իմ կողե-  
րէս նորէն ծնին,

Եթէ կ'ուղէք որ արհաւրալից գետերս դիակներով  
բեռցուած չի թաւալին . . .

Եթէ կ'ուղէք որ աստղերս բացուին և բլուրներս  
ծաղկանան . . .

Եթէ կ'ուղէք որ աղբիւրներս երազներու պէս ճա-  
ռագայթեն . . .

Եթէ կ'ուղէք որ բարերեր դաշտերս նորէն իրենց  
ցորեանները ծովացնեն . . .

Եթէ կ'ուղէք որ մայրութեան կաթովս ձեր այդինե-  
րը ոռոգեմ,

Եթէ կ'ուղէք որ արշալոյներս մերկանան և արե-  
գակներս ծաղին . . .

Եթէ կ'ուղէք որ հովիաններս այլեւս մահուան շունչն  
տակ չի հեծկլտան . . .

Եթէ կ'ուղէք որ սերունդներս բարգաւաճին և իմ  
այրիի դէմքս գէթ առաւօտ մը ժպտի . . .

Եթէ կ'ուղէք որ խաղաղութիւնը ձեր երդիքներուն  
տակ արձանանայ ,

Եթէ կ'ուղէք որ ձերիններուն տաքարիւնը ճամբա-  
ներուս քարերէն վար ա՛լ չի հոսի ,

Եթէ կ'ուղէք որ ձեր Վրէժը լուծուի և ձեր Ատե-  
լութիւնը յափրանայ . . .

Եթէ կ'ուղէք որ Արդարութիւնը տիրապետէ և իր  
ոստանը կառուցուի ,

Եթէ կ'ուղէք որ Հայկաշէնն և Արմատիրը , Տիգրա-  
նակերտն և Արտաշատը վերականգնին ,

Եթէ կ'ուղէք որ ձեր հոգիները զօրանան և ձեր ճա-  
կանները լուսաւորուին . . .

Եթէ կ'ուղէք որ դաժան խղճիսայթը ձեր ամննուն  
առջեւ գերեղմաններ չի փորէ . . .

Ինծի հասէք այն ատեն , մոլեգնաբար և գունդ առ  
գունդ ,

Բաղուկներնիդ ըմբոստացումի երկաթեղէն հովերուն  
եւ ճակատներնիդ բոլոր բաղխումներուն կարկառած՝  
եւ աղաղակեցէք ճգնաժամներու մահաշուք օրերուն  
հսմար սահմանուած ,

Արիացումինն անդառնալի ընդվզումներու , յուսա-  
դրող , սպառազինող , յաղթանակող՝

Ձեր սրտու և կատաղի կոչերն Ատելութեան ,

Աղաղակեցէք զանոնք որոտումի գոռումներով ա-  
պերասան ,

Դաշտավայրէ դաշտավայր , քաղաքէ քաղաք և հո-  
գիէ հոգի ,

Վասն զի գիտեմ որ այս վճռական ընդհարումներէն  
յետոյ ,

Թշնամիին ոսկորներէն , յաղթանակին կոթողներն  
ահարկու ,

Ահագնաբար, ճակտիս վրան, ձեր ձեռքերով, աշ-  
տարակույն պիտի . . .

«Օգնութիւն աղաղակեցէք, ձեր հոգիին բարկու-  
թեան շունչովը լովանդակ

Ու թող ցանուցիր զաւկըներուս ամբոխներն հայ-  
կական

իրարու զանգուածուին , եղբայրանան , հրահրուին ,  
Զեր վրէմի մահաշունչ կոչին պատգամներուն տակ ,  
Ու թո՛ղ ձեր դաստակները կայծակներու նման գա-  
լարուին ,

Ու գլուխներնիդ արիւնով և յոյսով խենթենան . . .

Ու թող ձեր մերկացուցած սուրելը վայլատակին ,  
Երիվարներու դռոյթէն արձակուած բոցերուն հետ ,  
Ու ձեր ջահերը թո՛ղ իրենց արևները տարածեն ,

Ուղմաղաշտէ ուղմաղաշտ ու կատարէ զատար։

*0' ορυκτού θέματος, ορυκτού θέματος, ορυκτού θέματος*

Զաւկըներուս սիրոյն և Արշալոյմներու հողին փրկու-  
թեամը համար . . .

«Ու որպէս զի ձեր հոգիներն արիանան և ձեր ի-  
րանները մարմարուին . . .

Որպէս զի Ատելութիւնը ձեր սրախն մէջը ծովանայ,  
Որպէս զի ձեր քայլերը վճռուին ու ձեր կամքը փո-  
թորիի,

Որպես զի ձեր հողին մահը գէթ անդամ մը ձեր ու  
դեղը դաշտունէ . . .

Որպէս զի ձեր բազուկները զարմեն ու ձեր կուրծքերը պղնձանան,

*Տեսէ՞ք անգամ մը օգնութիւն հայցող կարաւանները  
իմ մռցուած զաւկրներուս,*

Ու անոնց մարմիննելը օրերուն ոճիրներէն քարու-  
քանդ,

Անոնց որբ հոգիներն ձեր լքումներէն վիրաւոր,  
Անոնց աքսորանքի շտապը իմ դժուարին բլուր-  
ներէս ի վեր,

*Տեսէ՞ք, անոնց նպյուածքները վերահսու մահէն դարձնուած,*

Ա անոնց աղօթքը ու ճիչը ու պաղատանքը նորակոծ,  
նորէն ու նորէն յուսալով և անձկագին դէպի ձեզ  
ակնդէտ,

Արք բոլորէն, ով հալածական և հեռաւոր և տարագիր զաւկըներ,

կը բոլորէն պաշտպանութեան շարժում մը կամ կա-  
թիւ մը արիւն ,



73 56 73

Կամ քանի մը դօրաւոր կեանք, յոյսով և յուսահաւ տութիւնով սպառաղէն,

Զեր բոլորէն իրաւամբ և եղբայրաբար կը սպասեն . . .

«Աճապարեցէք, ձեղի եմ, որովհետեւ բոլոր կեանքերը պիտի ջախջախուին,

Բոլոր ամոլները պիտի այրիանան ու բոլոր այրիները պիտի մահանան,

Քոլոր նորածինները իրենց խանձարուրներուն արիւնոտ ծալքերուն տակէն,

Իրենց կեանքին անզիտակ աչուըները մահուան մէջը պիտի ըանան . . .

Ու դեռ բոլոր գիտինները անգամ մըն ալ և վայրագորէն

Իրենց կտաւէ պատանքներուն ընդմէջէն պիտի յօշոտուին, պիտի սրածուին . . .

Ու բոլոր արգասարեր արտերն ու խարտեաշ հունձքերն վաղորդայնին,

Այգեստաններուն ու ծաղկադաշտերուն հետ բոլորը մէկ պիտի մոխրանան . . .

Աճապարեցէք, բոլոր կաթողիկէնները իրենց զըմբէթներովը պիտի թաւալին,

Ու բոլոր քաղաքները քաղաքներուն և զիւղերը գիւղերուն տակ,

Ու բերդերն ու պատմէններն ու աշտարակներն դաշտաւոր՝ այս բոլորին վրայ . . .

Աճապարեցէք, ովք վրէժմնդրութեան օրերու դաւկներս անվեհներ,

Դէպի ձեր հողը նուիրական, ձեր նիզակները ցցած ու ձեր կուրծքերը բացած՝

Զեր վահանը կոիւններու հովին, ու ճակատամուխ երկաթներնիդ հօճելէն,

Աճապարեցէք, ու վայրագաբար ու փոթորկապէս ու քինայոյզօրէն

Դէպի անտափիկ ապառաժններն իմ յաւիտենական կողերուս . . .

«Ու այս ալ ըսած թող ըլլամ ձեղի, ովք վարանոտ զաւկլներ,

Թէ վրէժմնդիր ու սուրբ ատելութիւններէն վերջնէ միայն,

Որ սրբազն ու աստուածային Սէրը կեանքին, իմ անսահման ու մայրական կուրծքիս վրայ պիտի ապրի . . .

Որովհետև աւազ, միայն ես զիտեմ թէ արիւնի  
ի՞նչ անագորոյն սահանքներ

Իմ եօթը խաւերուս աղջամուղներուն խորը սուզ-  
ուելով

Հաստատութեանս հիմունքները անողորմաբար ոռո-  
գեցին...

Միայն ես զիտեմ, իրարու ետևէ, անոլերջօրէն,  
հոգիս խորը մարձուող

Կիսաբայ գաղաղներուն ճարճատիւնն ահարեկիչ...

Միայն ես իմացայ բոլոր անպատմալի հոնդիւնները  
ոգեվարներուն...

Բոլոր աղաղակներն անսնց, որո՞ք փրկուիլ ուղեցին,  
Բոլոր ցաւատանջ կարկառումը այն ամենուն,

Որո՞ք դեռ վայրկեան մը արեգա՛կը, արեգա՛կը պա-  
զատեցան...

Միայն ես իմացայ բոլոր անձկութիւնը իրար դեռ  
տարփօրէն պաշտողներուն,

Բոլոր կողկողանքը զաւկըներէ բաժնուող աշոդէն  
այրի մարերուն...

Ու աս բոլորին մէջէն ահագնալից կրծտիւնը փռ-  
րուող ւակորներուն...

Ու իրաններէ անջատուող գլուխներուն վայրէջքը  
ցնորական,

Միայն ես իմացայ, երբ կառավինատներու բարձրե-  
րէն իմ ճակախս վրայ ինկան...

Ու վերջապէս միայն ես զիտեմ կուտակումները այն  
կմալքներուն,

Որո՞ք սրախս խորքերուն մէջը, ո՞ր ժամանակէն ի  
վեր, ո՞ր ժամանակէն ի վեր...

Սյնչափ մրրկոտօրէն արմատացան, անտառուեցան...

Յւ յետոյ Հողը քաղցրութեամբ՝ մաքառոլներուն  
համար՝ սա աւետիսը տուաւ...

«Բայց հիմա, ո՞վ դուք որ յամառօրէն մարմինիս ու  
հոգիս կաւչած էք,

Դուք Հաւատարիմները, դուք Ուխտուածները,  
դուք իմ Հարազատներս անբասիր

Դուք որ իմ ցաւերս ապրեցաք ու ձեր արիւնը ինձի  
համար անինայ բաշխեցիք,

Դուք որ դասալքումներու դժխեմ վատութիւնը չի  
ճանչցաք,

Զեղի եմ, սրասապնդուեցէ՛ք, յուսաղրուեցէ՛ք, խա-  
չակնքուեցէ՛ք,

Քանդի, իրենց փախուստներէն խղճահարուած ձեր  
եղբայրները բոլոր,

**Ահաւասի՞կ կը հասնին . Ատելութենէ հրաշացած ու  
Սիրով արքչիւ ,  
Եւ արշալոյսին հուրերուն մէջէն իրենց երկաթեաց  
ձեռքերը ձեր ձեռքերը կը վնասեն . . . »**

1902 Փարփա

## **ԶՂՃՈՒՄԻՆ ԹԱՓՈՐԸ**



**Դարիքին համար**

## Գ.

ԸՄԲՈՍՏԱՑՈՒՄԻ և աւերումի իրիկուան մը սու-  
րերուն մէջէն՝

ԵՐԲ Հերոսներու աստուածային արիւնը՝ հողին հեծ-  
կատացող կուրծքէն ի վեր,

Յաղթութեան և յոյսի կարմիր արեգակի մը նման կը  
բարձրանար,

Յանկարծ զարհուրեալներուն, չփոթածներուն և մի-  
նաւորներուն խուճապը սկսաւ,

Քաղաքներէն և աւաններէն դուրս, հովիաններէն,  
բլուրներէն և գետերէն անդին,

Դէպի անստոյդ համգրուանները մահացնող օտարա-  
բացումներուն . . .

Եւ հազարաւորներ էին անոնք, հազարաւորներ ու  
հազարաւորներ՝

ՈՐ մէկէն ի մէկ աղէտաձայներէն զարհուրած դեռ  
չէին կրցեր իրենց քայլերը վճռել,

Իրենց դաստակներն ու սուրերը գալարելու, թշնա-  
միները նայուածք նայուածքի ճակատելէն,

Եւ այս բոլորը խելայեղուած՝ մոլսիրի, հոգելարքի  
և լացուկոծի քառուղիներէն անցան,

Անոնց հետ որ աւանդ, կոտրտուելով, մեռնելով,  
ջախջախուելով, արիւնուելով կը շտապէին,

Իրենց մազերը անգթօրէն փետտելով և կորսուած  
զաւկըներու ի խնդիր . . .

Եւ օրերով և խաւարներով սահմանէ սահման խու-  
ճապեցին,

Եւ կային որ կիսամեռ մարմիններ ուսերնուն վրայ  
և գետնաքարչ՝ կը վախչէին,

Կային որ իրենց հաշմուած ձեռքերէն և տրօրուած  
սրունքներէն մաս առ մաս,

Ճամբաններու քարերուն, հողակոյտերուն և մացառ-  
ներուն վրայ,

Եղերականօրէն, արիւնոտած լաթերու պէս՝ թափ-  
թըփելով՝ կը շտապէին,

Բնդվլումի շառաջներուն և հրդեհուած քաղաքնե-  
րուն առջնուէն . . .

Զարհուրալից արշաւանքովը անապատներու այն  
փոթորկին . . .  
Որուն վայրագութեանը վրայ, քալող անտառներու  
հանգոյն, կայծակները կը տապալրւին . . .  
Երկրին բոլոր ծայրերէն կը խուժէլին ասոնք, բազուկ-  
ներնին հովերուն՝  
Եւ չի մօտեցող օգնութիւններու պաղատագին տա-  
րածուած,  
Կոյրերու խաւարչտին և անդիտակից խուռներամի՛  
մը այնչափ նման  
Որ զայրագին ու մոլեգնած ու առխարխափ,  
Ապառաժներու անագորոյն բաղխումներուն պիտի  
վազէր . . .

Բայց Մէկը որուն մտածումը մոլորածներու այս  
մղձաւանջէն կը խենթենար,  
Որուն հոգին կարիւնոտուէր և որուն Ուխտը իր  
ներսիդին իր կոչումը կը ձայնէր,  
Ամբոխին առջև աշտարակուելով՝ անոր վազքը դադ-  
րեցուց, և ծանրադէմ ըսաւ.  
Իր խօսքերը իր կամքին և իր չաւատքին չափ  
անձնուրաց էին և զօրաւոր,

Իր շունչը սրտոտ, նայուածքները պղտոր և իր հըս-  
կացի ճակատը բոցավառ:  
Եւ քայլերը կասեցան և վաղքը դադրեցաւ և կամ-  
քերը պղկուիլ սկսան՝ երբ Անիկա կը խօսէր . . .  
«Դէպի յե՛տ, դէպի յե՛տ, դէպի յե՛տ, և ըսէ՛ք, դեռ  
ո՞ր յոյսին և ո՞ր գթութեան  
Մահացու, անողորմ ու մարդկային այդ ապառաժ-  
ներուն դիմաց,  
Այսպէս սլիտի երթանք կարաւան առ կարաւան,  
խելայեղաբար և բազկատարած՝  
Մեր իրաններն ու մեր ճակատներն անոնց հանդէս,  
անդամ մըն ալ կոտրտելու . . .  
Ըսէ՛ք, դէպի ո՞ր օգնութիւնը և դէպի ո՞ր արիւ-  
նարու. թշնամինները սլիտի քալենք . . .  
Դէպի ո՞ր չնորհին և ո՞ր մարդասիրութեան թունա-  
ւոր բաժակներուն . . .  
Պիտի երթանք մեր ծարաւէն սառած շրթունքները-  
կարկառելու . . .  
Ո՞ր անողոք ասառածութեան և ո՞ր անողոք խո-  
րանին կը յառաջանանք,  
Մեր պաշտամանքը, մեր արիւնը և մեր արցունքը-  
անոնց առջև թափելու . . .

Ո՞ր բարբարոսութեան և ո՞ր բանապետին ամսողորմ  
ճիշաններէն ,  
Մենք մեր կեանքին՝ մեր հողին և մեր հողին փըր-  
կանքը կը յուսանք ,  
Ո՞ր արեգակին , ո՞ր զիշերին և ո՞ր հորիդոնին տակ՝  
Այսպէս կերթանք մեր փախուստէն ամօթահարի  
մարմինները գերեղմաննելու . . .  
Ո՞ր անդունդին ըերաններէն և ո՞ր ժայռին կատար-  
ներէն , այս իրիկուն ,  
Պիտի երթանք , մեր ստրուկի ձեռուըներովը մեր  
աչուընները փակած՝  
Վատերու պէս դէսլի անէացումին խորխորատնները  
գահավիժուելու . . .  
Մինչդեռ անդին , մինչդեռ անդին , մեր բոլորին  
համար՝ մեր ամննուն սիրոյն .  
Մաքառումի , քանդումի և յոյսի հողին վրայ ,  
Ազատութեան ջահակիրնները ընդվզումի բոցերէն  
աստուածացած՝  
Եւ իրենց դիւցաղնի կամքէն ամննաղօր , գերագոյն  
կոփէններու կոփէը կը մղեն . . .  
«Զեղի եմ , դէսլի յե'տ , դէսլի յե'տ , դէսլի յե'տ ար-  
շամնք ,

Մեր թմրութենէն և մեր սարսափէն առնարար  
ոթափելով ,  
Եւ թո՛ղ մեր տեղափոխուող ծովի զարհուրանքը  
թշնամինները խիզախէ ,  
Թո՛ղ մար ակուանները զանոնք յօշոտեն և մեր  
բռունցքները վայրագօրէն հարուածեն .  
Թո՛ղ մեր ձեռքերը ճամբաններու հրաքարերովը զին-  
ովին ,  
Թո՛ղ մեր քայլերը հնչեն և մեր վրէմի և քաղցի  
աղաղակը որոտաց  
Թո՛ղ մեր կարտանը մեր յառաջապահ եղբայրները  
պատնիշէ ,  
Թո՛ղ մեր թեւերը կուռներուն ետեւը լքուած մեր  
զաւկըններուն երկարին ,  
Թո՛ղ մեր բերանները զանոնք համբուրեն և վաղոր-  
դայնին Յոյսը զանոնք օրօրէ ,  
Թո՛ղ մեր ատելութեան և մաքառումի ձայնները  
զանոնք կազդորեն ,  
Թո՛ղ մեր այսօրուան քայլերը վաղուան կոփէն մէջ  
անոնց քայլերը որոշեն ,  
Եւ թո՛ղ մար ճակատին , մեր մտածումին և մեր հողի-  
ին վերքերն անոնց համար ,

Բմբաստացումի և աշատութեան խորհրդանիշերը  
հանդիսանան . . .

«Ուրեմն դէպի յ՛ւտ, դէպի յլ՛տ, որովհետեւ, ճշմա-  
րիտ, ճշմարիտ կ'լսեմ ձեզի,  
Հայրենիքի այս լեռներէն, դաշտերէն, այդիներէն  
և հովիաներէն անդին,  
Ուրիշ ամեն աղբիւր, ամեն աղբիւր, մեր բերան-  
ներուն մէջ իր թոյնը պիտի վաղցնէ,  
Բոլոր գոները ու բոլոր անցքերը ու բոլոր ուղի-  
ները մեր առջև պիտի խափանուին . . .  
Բոլոր յոյսի աստղերը մեզի համար պիտի խղդուին  
և ամեն արև պիտի խաւարի . . .  
Մեր հացին ալիւրը մերիններուն փշուած ոսկորնե-  
րէն պիտի շաղուին . . .  
Մեր համենիքներուն փառաւոր անունը մեր անունին  
տակ պիտի փճանայ,  
Ու վերջապէս բոլոր օտարութեան երդիքները՝ եր-  
կաթակոյտերու ծանրութիւնով մը ծանր .  
Անողորմարար, մեր գլուխներուն և մեր ուսերուն  
վրայ պիտի փէչին . . .»  
Պատգամարերը իր խօսքերը դադրեցուց իր խում-  
բերուն հետ յառաջանալով,

Երբ դոջումի թափօրը դէպի երկիր՝ ծնրադիր և  
դոջոջուն, պաղատեցաւ . . .

«Թողութիւն մեզի, թողութիւն մեր բոլորին, թո-  
ղութիւն, ով մայրերկիր,

Որ քու ցաւերդ, քու նայուածքներդ և քու սուրբ  
կոխուդ լքելով, քեզի զիմաց մեղանչեցինք,  
Ընդունէ մեզի, քանզի մեր մարմիններն ու մեր  
մտածումը, այս իրիկուն,

Քու դիւցազնական Առաքեալներդ իրենց չունչերովը  
զօրացուցին . . .

Ու մեր յուսահատութենէն՝ մեր առջև յաղթութեան  
Յոյսը կառուռուեցաւ . . .

Ընդունէ մեզի, գիտենք որ քու վրկութեանդ մէջն  
է Փրկութիւնը մեր ամենուն . . .»

Եւ հիմա բովանդակ թափօրը վճռական՝ հորիզոնէ  
հորիզոն՝ դէպի Հողը կը խոյանար,

Մինչդեռ ատելութեան և սիրոյ և զղջումի ար-  
ցունքները անոնց աչքերէն կը հոսէին . . .

1902 Փարիզ

Դ.

## ԱՆԴՐԱՆԻԿ

Ի ՆԲՆ էր որ Երազիս, մարմարեայ եղերքներուն  
վրայ, այս գիշեր,

Սալառաժի մը նման անյալթելիօրէն ոտքի,

Իր ըմբոստացողի հրեղէն Ալուխն ասաղերուն մէջ  
միսրձելէն,

Աւ իր ձեռքը ատելութեան սուրելով լը զինած,

Հոռան փրկութեանը սիրովը հրաշացած եղբօր մը  
նման,

Որ սղբօր մը օտարացումէն իր հոգին կ'արիւնի,

Խօսեցաւ ինձի Սն, և իր բառերը իրարու ետեւէ  
և կարդ առ կարդ,

Խիստ էին և քաղցր և ճշմարիտ և քինայոյդ և առա  
նական . . .

«Եւ անաւասիկ ես եմ, ով մեղկութեան ու անշարժութեան դաւակ,

Որ աղմկայոյլորէն՝ այս իրիկուն հեռուներէն կուգամ,  
Քու երաղուն և անտարբեր ու անգործօն ու եսական  
ու տկար,

Երիտասարդի մարմնուդ ու էութիւնդ ու հողիդ,  
Բաղուկիս հարուածովը ու սուրերուս չառաջն հետ,  
Կոփւներու հարկադրիչ ժամերուն համար, վերջնականապէս ցնցելու...

Ունկնդրէ՛ իմ ձայնիս որ այս վճռականութեան օրերուն  
Մեր ցեղին, մեր վրէժին ու մեր արիւնին աղաղակնէ  
ահարկու,

Ու խառնուէ՛, ընկերացի՛ր, եղբայրացի՛ր, սա՛ մեր  
հղորաքայլ ամրուին հետ՝

Եթէ դեռ քու հոգիդ մէջ աղատութեան ու է կայծ  
վառ մնաց,

Եթէ դեռ քու բաղուկներդ քաջութիւնը ունին թըշ-  
նամիներ հարուածելու,

Եթէ սիրոդ գէժ անգամ մը խոցոտուեցաւ մեր  
մայր-հողին մահացումէն,

Եթէ ցեղիդ տառասպանքէն ու անմեղներու կոտորա-  
ծին մշաւանջէն,

Քու ներսիդիդ ատելութեան ու բարկութեան ան-  
տամները բարձրացան...

Եթէ դուն դեռ կեանքիդ մէջը պիտի կրնաս նպա-  
տակի մը փաթթուիլ,

Եթէ դեռ քու աչուըներդդ այդ անօգուտ արցունք-  
ներէն չի կուրացան...

Եթէ դուն քու աղօթքներդ Ատելութեան գուռում-  
ներու փոխեցիր,

Եթէ ցեղիդ ուալմական ու արեգակէ արիւնին

Երակներուդ ու զլսիդ մէջ բորբոքուիլը դեռ կը  
դդաս,

Եթէ դեռ Արամին, Տիղրանին, Արտաշէսին և Վար-  
դանին,

Յաղթանակնուզ զօրութենէն քու մէջդ շունչ մը մնաց,  
Եթէ Սերողներու, Փարեաններու, Պետոններու և  
Ժիրայրի,

Դիւցաղնական քայլերէն քու երաղողի նայուածք-  
ներուդ առջև,

Սնձնուիրութեան, վրէժի և աղատութեան ճանա-  
պարհ մը բացուեցաւ,

Ոտքի՛ կեցի՛ր այն ատեն, եղբայրացի՛ր խումբերուս  
ու մըրկուէ՛ անոնց հետ,

Որովհետու, գիտելիք որ այս զոհաբերումնի, ընդ-  
վղումնի եւ յոյսի օրերուն,

Մեր ամէն մէկուն համար անկողնի մէջ հողի տալը  
վատութիւնն է վատութիւններուն... .

Յանկարծ խումբերը հեռացան արևւածաղին կրակ-  
ներուն մէջէն,

Ու իրենց կամաւորի գիտակից ու վճռական քայ-  
լերուն հնչինը երկաթեայ,

Մարմարակոյակը փշող անհամար կուաններու հըն-  
չիւնը ունէր...

Մինչդեռ թշնամիներէն անջատուած զլուխներ, չա-  
հերու պէս կը բոցավուէին՝

Իրենց ուսերուն վրայ բարձրացուցած սուրերուն  
կատարներէն...

Ու տեսայ որ տաք արիւն մը կը քամուէր, խռչա-  
փողերէն, կաթիլ առ կաթիլ, գէպի վար,

Անոնց ամէն մէկուն լայն ու զօրաւոր ու մէրկ  
ծոծրակները թրջելէն...

Եւ ես այն ատեն՝ նախանձութեամբ ու տարիամնքով  
հողին վրայ ծնրադիր՝

Իրենց հերոսի քայլերուն հետքը երկիւղածօրէն  
համբուրեցի...

1903 Փարիզ

## ԱՂԲԻՒՐ-ՍԵՐՈԲ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԻՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԶԻՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ

ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀԱՄԱՐ

## Ե.

ՈՎ ՄԱՐՏՆՉՈՒՄՆԵՐՈՒ և զօրութեան արքայա-  
կերպ հակայ,  
Ներէ որ ակնածութեամբ և եղբօր մը պէս դէպի  
քեզ յառաջանամ,  
Եւ իմ տառապողի և տարիաւորի կարմիր քնարովա-  
այս իրիկուն,  
Քու ջատագովանքդ ու փառաւորումդ երգեմ քեզ  
պաշտողներուն համար:  
Թէւ իմ չունչս կարող չըլլայ քու յաղթականի փառ-  
քըդ շեփորելու,  
Թէւ իմ ընկճուածի մտածումս քու անունիդ կատար-  
ներուն երբեք չի բարձրանայ,  
Թէւ հոգիս անարժան ըլլայ քու հերոսի հոգիդ խո-  
րասուղելու . . .

Թէւ խորհուրդներս ըլլան աղքատ և ձեւերս անպա-  
ճոյց,  
Թէւ քեղի համար կառուցած խորանս ըլլայ անսուրը  
և ծխած խունկս օտար,  
Թէւ ես խեղձ լացող մը միայն եղած ըլլամ Հայ-  
րենիքիս մոխիրներուն առջե,  
Թէւ իմ քայլերս քու քայլերուդ ճամբաները ստրկօ-  
րէն անզիտանան,  
Թէւ բաղուկներս ու կործքս խուսափած ըլլան քու  
կախիդ սրբալայրերէն,  
Թէւ աչուըներս դեռ խենթեցած չըլլան քու «Դրօ-  
շակիդ» ծածանումին իտես,  
Թէւ ճակատս մինչեւ այսօր ընդվլումի կայծ մը յլա-  
ցած չըլլայ . . .  
Բայց ներէ պարտուածիս, ներէ եղբօրդ որ այս  
իրիկուն դքեզ երկրպագէ,  
Հորիզոններէն քալոդ քու արձանակերպ ստուերիդ  
խենթի մը պէս կառչելով,  
Ու թող քու հերոսի շունչիդ հովերէն գինովնամ  
Թո՞ղ քու մտածումիդ և անցեալիդ պատկերներէն  
այլակերպուեմ,  
Թո՞ղ քու դիւցաղնի արփալեւ անունէդ եղէզի մը  
պէս դողդոջնամ,

Թո՛ղ քու հաւատքովդ լուացո իմ և քու հրամանովդ  
յառաջանամ . . .

Որովհետեւ թերեւս այս բոլորը , քու աչուճներուդ  
ու կերպարանքիդ քաղցրութեանը հետ հրեշտա-  
կային

Ու խոէալիդ ու յաղթանակներուդ մարտապատկերին  
հետ ,

Թերեւս իմ արիւնս հրավառեն , կորուսեալի քայլերս  
ուղղեն , թերեւս բաղուկներս ու կուրծքս  
երկաթեն . . .

Դուն տարիներով ու տարիներով սարւափանքը եղար  
մեր թշնամիի խուժաններուն ,

Դուն՝ որուն արդարութեան սուրը եղեռնին վրայ  
շանթի մը պէս կը շողար ,

Դուն՝ որուն նայուածքներուն հրամանին տակ բար-  
բարոնները սպազանկէն կը ծնրադրէին ,

Դուն՝ որուն քայլերուն և զէնքերուն շառաչումէն  
ուազմազունդեր նահանջեցին . . .

Դուն՝ հայրենիքին սրտապնդող արեգակն էիր ղըժ-  
բախտներուն համար .

Եւ միանգամայն փոթորկանման աղջամուղը թշնա-  
միներն ահարեկող . . .

Դուն՝ այն կամքի ու յոցոի մարզարէն էիր որուն  
հոգին ի տես .

Բայրոր Սասունն ու Մուշը ու Բաղէչը հաւատքովդ  
հաղորդու եցան . . .

Դուն անտիրական ժողովութղին պաշտպանն էիր  
ամինազօր ,

Դուն՝ քաղաքներուն ու լուսոր երդիքներուն խաղա-  
ղութիւնը եղար ,

Եւ անընկձելի հակողը ճակատազրէն ու ոճիրներէն  
դատապարտեալ անմեղ կեանքերուն ,

Դուն բարերեր դաշտն էիր ու պաշտու այզին  
ոսկնվառ ,

Դուն այն առաջան էիր պայծառ՝ որուն վրայ բոլո-  
րըս տարփանքով զլիսահակ ,

Մեր ապագայ օրերուն արշալոյսներն ընդնչմարե-  
ցինք . . .

Դուն մէկը եղար հիմնաքարերէն աղասութեան այն  
ապարանքին ,

Որուն վրայ այլեւս բիւրաւոր ու յաղթական բաղուկ-  
ներ ,

Անխռնջօրէն , մարմարեայ զանգուածներ կը բարձրա-  
ցնեն . . .

Եւ առաւօտ մը , մեր հեռաւոր ու սեահեր ու տրասում  
քոյրերն , քու անունիդ քաղցրութեանը իլուր ,  
Զքեղ երկիւղածօրէն և սրբութեամբ իրենց Ա.Ղ.ԲԻՒ-  
ԹԸ անուանեցին . . .

Ու հրաշախառ ծերունիներ քու փառքիդ և արեւիդ  
համար ,

Հսկումներու ծնրաղրեցին պատարագներու առջե-  
արտասուելէն . . .

Ու վերջապէս դուն , ո՞վ անկորնչելի , բովանդակ  
ցեղիդ գոյութեանը վրայ

Անդորրութիւնը տարածելէն վերահաս աղէտքները  
կամքիդ բոցովը ցրուեցիր . . .

Ու քեզի հետ էին ու քեզի հետ ինկան քու քառա-  
սուն զինակիցներդ փառայեղ ,

Անոնք որոնց հողիներն քու խօսքիդ ու քու արար-  
քիդ ծարաւովը կ'այրէին ,

Անոնք որոնց շունչը քու շունչիդ հովերէն էր որ կը  
հպարտանար ,

Անոնք որոնց բերաններէն , Խանասօրի լեռները , քու  
անունդ կ'արձագանդէին ,

Անոնք խնկարկու և շքեղ քահանաներն եղան քու.  
աղատադրման կրօնքիդ ,

Անոնք իրենք իրենց մէջ քու իշխանական անձիդ  
ակրապեառումը կ'ասլէին ,

Անոնք քու գաղափարովդ զինով էին ու քու զօրու-  
թեամբդ զօրական .

Ու գիտցան ու կարողացան ըմբռստացումի առաւօտ-  
եան մը զարհուրանքին մէջ ,

Իրենց արիական արիւնը խառնելու թշնամին մեղա-  
պարտ արիւնին հետ . . .

Ու դեռ քու կինդ կար , աստուածային ու մաքրա-  
կրօն Սոսէն՝

Որ հրացանդ ու սուրդ իր հոլանի ուսերուն վրայ  
կլեց ,

Ու քու յաղթական և արքայական դլուխդ , ցաւի  
ժամերուդ ,

Իր սիստիարար ու գորովագութ ու սիրատոչոր  
կուրծքին վրայ . . .

Ու յետոյ եղբայրներդ կային և մանաւանդ զաւակ-  
ներդ իրենց հօրը հետ սրբօրէն ըմբռստ ,

Իրենց արիւնը որ Վարդանեաններու արիւնն էր  
հրաշէկ ,

Ազգին համար և արցունքոս նայուածքներուդ առ-  
ջեւ , հպարտութեամբ հոսեցուցին . . .

Բայց ըսկմ քեզի, ով եղբայր, ով հերոս, ով Աղ-  
թիւր,  
Ու թող քու ոսկիէ ոսկորմներդ հողին ծոցին մէջ  
լուսաւորուին,  
Թող քու ճակատդ իր ցաւէն ու յոդնութենէն նոր  
յոյսով մը ծաղկի.  
Ու թող քու վրէժդ ու ցասումդ այլես առյաւէտ  
յափրանան . . .  
Կամնդի քու վայրադ դահիճդ քու զինուորմներուդ  
արդար ձեռքովն պղնձեայ,  
Փառքի և պարծանքի անմուաց օր մը անդթարար  
գլխատուեցաւ . . .  
Եւ դեռ ուրիշներ բարձրացան, ուրիշներ զինուորուե-  
ցան, ուրիշներ մեռան,  
Եթու հաւատքիդ զողգոթային վրայ, քու լեռներուդ  
դիմաց, քու պաշտպաննեալներուդ պաշտպան,  
Ասոնք Հրայրներն են, վաղարչակները, թորգոմներն  
ու վահաններն վեհապանձ,  
Որոնց արշաւախումբերէն արխւնարբու թշնամիները  
նորէն դղրդեցան,  
Որոնց երեւումը քու մահէդ անմիխթար երիսասարդ -  
ները նորէն ծառացուց . . .

Ու անհամարներ կան այսպէս, կատաղաբար ու  
վճռականորէն ոտքի,  
Հողին տարփանքովն արիշիու ու աղատութեան  
մտածումովն սպառազէն . . .

Աւա՛զ, չեմ գիտեր թէ ո՞ւր է որ իր բոլոր փառա-  
ւորութեամբը կը յաւերժանայ,  
Քու տիտաննեան մարմինդ արեւանսան զլուխէդ  
անջատուած,  
Ո՞ր վրէժինդիր, ո՞ր քինայոյզ և ո՞ր բարեկամ  
աստղին տակ,  
Բայց քու անունդ, ով զօրութենէ և հաւատքէ  
հրաշացեալ Սերու,  
Քու անունդ կը տարածուի, կը դահակալուի և  
կ'արշալոյսուի,  
Մեր հոգիներուն տրամութեանը և հայրենիքին բոլոր  
անկիւններուն վրայ,  
Խոչպէս աստուածառաք և անձառելի և աննուած  
Անունը Յոյսին . . .

# ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՈՒԽԱՅԱՅԱՍԱՆԻ ԽԱՅԱՎԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԵՒ ԱՐԻՒՆՈՏ Ս. Արարատին կատարմակրուն ստորոտէն,  
Սնոր ըմբոստացողի մրրկոտ չունչը այսօր նորէն  
կը հիշե :

Եւ երէկ, ո'վ դուն, տառապանքէ ու մաքառումէ  
աստուածացած սրբազն Ծերունի,  
Քու հեռաւոր ու անձկալից վեհարանիդ պատըշ-  
գամներէն,  
Բաղուկներովդ՝ թշնամիին վոհմակներուն վրայ սար-  
սեցուցած,  
Քու ընդվղումի բոցավառ եւ օրհնեալ ջահերէդ՝  
այսօր,  
Մեր ամենուն պաշտամունքով եւ անձնուիրութեամբ  
առլցուած աչքերն . . .

Նորէն քեզի կը դառնան, նորէն քեզի կ'ուխտաւ սորուին...

Ոտքի կանգնէ՛ վեհափառ, ոտքի կանգնէ՛ ով քաղցրօրէն Հայրէլ

Եւ յուսաղրէ զմեզ, քու աւետարանական խօսքեւ զուդ զօրութեանը ծարաւը ունինք,

Նորէն զմեզ փոթորկէ՛, նորէն զմեզ զինովցուր, նորէն զմեզ իրախուսէ՛,

Որովհետեւ այսչափ մաքասումներէ ի վեր, այսչափ արիւներէ ի վեր,

Զաւկըներուդ մտածումը, նայուածքները եւ հոգին Բմբոստացումին ուխտուած ճանապարհին քարեւ րուն վրայ,

Քու լացակայ քայլերուդ եւ ոսկիէ գաւաղանիդ հնչիւնին ովասեցին...

Բայց դուն չեկար, Հայրիկ, չի ծռեցար, չի ծնրադրեցիր, ինչպէս երբեմն՝

Հայրենիքի անասելի սրածումներուն, քաղաքներու աւերումներուն,

Դաշտերու եւ աւաններու մօխրացումներուն եւ դիակի շեղջակոյտերուն առջեւ,

Զեկա՛ր եւ չի հոտոտեցիր եւ չի խենթեցար մեր արիւնին ծովացումներէն...

Զեկա՛ր ու չի չարժեցիր քու հարազատ զաւկընեւ րուդ սուրերուն հետ՝

Քու նախկին եւ օրհնեալ եւ արդար սուրդ Վասս սլուրականի...

Զի քալեցիր անոնց հետ, ինչ հոդ, դէպի պարաւութիւն կամ յաղթանակ,

Եւ չի կրցար կառուցանել աղատութեան այն սատաններն անվիանդ,

Որ քու ձեռքերուդ միայն կերտուելու էր սահմանուած...

Մինչդեռ այն գաղափարը եւ կրակը որ զաւկընեւ րուդ արիւնը օր մը հրահրեց

Քու նայուածքէդ էր բղիած եւ քու աղատաշունչ խօսքերէդ արշալոյսուած...

Եւ միայն կոտորումներու եւ քանդումի արհաւրամից օրերուն,

Սդաւոր տաճարիդ խորաններուն առջեւ յաղթուածի մը պէս ծնրադիր,

Քու հպարտ, քու հոյակապ, քու հարուստ քու հանձարեղ ճակատդ պայծառ,

Անոնց խաչքարերուն դիմաց, ցաւիդ խորութենէն զգոյախար,

Եւ Սստծուդ գլխութեանը ի խնդիր, աւա՛զ, ա-  
պարդիւնօրէն արիւնեցիր . . .

Բայց խորանները եւ գմբէթներն իրենց քարէ խա-  
ւարը յաւերժացոցին,

Եւ լոռութիւնը երկաթեղէն անձրեւի մը նման քու  
չքնաղ հասակիդ վրայ տեղաց . . .

Եւ զօրութեան ու յաղթանակի Սստուածդ՝ անշուշտ  
Քու պարտուածի արցունքներուդ վրայ, դառնու-

թեամբ մը ժողոցաւ . . .

Եւ այսպէս ցեղիդ փրկարար ցաւը փոխանակ դքեզ  
ընդվզումին մէջ աշտարակելու,

Քեզ աղօթելու, արտասուելու, պաղատելու խո-  
նարհեցուց

Մինչեւ արժան էր որ դուրս գայիր կոիւին մէջ  
ու կոիւին համար,

Քու Լուսաւորչի գաւաղանդ ձևոքդ եւ մարդարանաց  
հողաթափիդ ոտքիդ,

Քու սքեմիդ եւ սաղաւարտիդ ընկճող վեհութեամբն  
փառաւոր,

Եւ քու խօսքիդ կախարդանքէն, քու ձայնիդ որո-  
տումէն, քու նայուածքիդ փայլակներէն . . .

Բովանդակական զաւելներդ, ամրու առ ամրու եւ խե-  
լայնարար,

Պիտի խումէին լեռնաւորուիլ քու լուսեղէն ձեռ-  
քերուդ եւ պատուանդանիդ տակ,

Եւ քու մէկ պատդամդ, քու օրհնութիւնդ, քու մէկ  
քայլդ պիտի բաւեր,

Իլրեւ մեր ամենուն մտածումին վարդասկետը՝ եւ  
մաքառումին վաղնջական ռահվիրան,

Որպէս զի կամքերը սուրերուն հետ վառէն, որպէս  
զի քայլերը յառաջանային,

Որպէս զի թշնամիները զարհութէն, որպէս զի  
յաղթանակները մարմարուէին . . .

Բայց այսօր, բայց այսօր, դեռ ուրիշ անագորոյն  
թշնամիներ,

Եկան քու Աղջիդ աստուածադիր եւ դարաւոր հիմ-  
նաքարերը կոտրանելու,

Եւ դուն, օ փառք քեղի, ցեղիդ սիրուն զոհուե-  
լու համար դէպի առաջ խոյանալէն,

Ըմբոստացար, եւ ցասումով ու բարկութեամբ անի-  
ծեցիր զանոնք.

Եւ սրբազն երդումը կարդացիր մինչեւ մահ կա-  
մովին եւ խրոխտարար քալելու . . .

Դիմաղրէ , ով տառանդանքի և մաքառումի անընկհելի ապառաժ ,

**Ահաւասիկ որ տաճարներուդ սրբավէմ գաւիթները  
թրջուեցան :**

Քու դիւցաղնական եւ մարտիրոս զաւկըններուդ առ  
բիւնովը սակելառ ,

**Ահաւասիկ որ սրտերն ու խտուեցան, և ձեռքերը  
բարձրացան,**

**Ահաւասիկ որ ատելութիւնը կը քալէ որբաղան  
սիրոյն հետ թեւ թեւի .**

Ոտքի կեցիր, ոտքի կեցիր, ով գալափարի եւ ազաւառութեան ջահակիր,

Որովհետեւ քեզի հետ ենք հայրիկ, քեզի հետ  
ենք մարգարէ, քեզի հետ ենք վեհափառ,  
Տե՛ս, քու ցիրուցան զաւկըներդ կործանումի ձայ-  
ներէն ըմբոստացած,

Քոլորը մէկ դէպին նոր ու փրկարար Շաւսըշանները  
կը քային,

Եւ Բղնունեանց Ծռ լը մրրիկո՞վ իր ալիքներուն՝  
քու կերպարանքդ կ'աղերսէ ,

**Ոտքի կեցի՛ր մեզի հետ ; ոտքի կեցիր տիրաբար ,**  
**ով հերսուական Հայրիկ՝**

Եւ քու երբեմնի սուրդ եւ այսօրուան խաչդ նուի-  
լական։

Երկու քը մէկ այլըն մէջ ամբարձն' լոլ, Աստծուդ  
նայուած քններուն դալարէ,

Եւ դառնութեամբ կամ քաղցրութեամբ Անոր հար-  
ցուր որ լնաւրէ . . .

Ես զիսեմ որ, Հրեղէնը, արշալոյսին մէջէն պիտի  
գուայ. . . . .

A horizontal strip of light-colored paper with a series of circular holes punched along its length. The holes are evenly spaced and aligned horizontally across the strip.

— „Արծիւ, քու հինաւուց Սուրբ այսօր նորէն  
մկնաբառնու՞ն”

Եւ արինոտ Արարատին կատարներուն ստորոտէն,  
Անոր ըմբռատայողի մլրկոտ շունչը յաւիտենապէս  
ափափ հնչէ . . .

1904 Φωτήq

Է.

## ԿՈՎԿԱՍ

ՆՈՒԷՐ ԿՈՎԿԱՍԱՀԱՅ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՄ

Ի՞նչ ՈՍԿԵՇԽՆ դարագլուխ է այս , եւ շղթաներում .

Ի՞նչ զայրագին վիրտում .

Ի՞նչ ընդհարում ճակատ ճակատի , եւ հաւատքի  
ի՞նչ յաղթանակ .

Ի՞նչ երկաթակուռ հարուած բռնսալետութեան ան-  
լսախտելի օրէնքներուն .

Ի՞նչ արիւնի հեղհեղում քեզ անարժան թշնամիիդ  
վայրագ շարքերէն ,

եւ դիակի ու բացուած լանջքերու ի՞նչ արդարաշա՞ր  
մեռելակոյտ ,

Մեր բոլորին վրիժածարաւ աչուըներուն առջեւ . . .

Կովկաս յաղթականօրին դուն եղար , որ յայտնու-  
թիւններուն գերագոյնը ըրիր .

Քու բաղուկներուդ հուրին մէջն էր գետնահարող  
զօրութիւնը Ցեղին,  
Քու մասածումիդ մէջն էր որ ծնաւ կարմիր արեւը  
յասահատեալ Յաղթութեան,

Քու արինիդ մէջն էր որ վառեցաւ ճշմարիտ ա-  
րինը երազուած Ընդվզումին.

Եւ այսպէս երիկուն մը քու զինավառ ձեռքերդ  
աղատութեան աստղերուն նիզակուեցան,

Թշնամի երկինքներուն չարիքի կամարներէն կորզելու,  
Քիչ մը լոյս, քիչ մը կեանք, քիչ մը սէր եւ քիչ  
մը երազ՝

Քու խռովեալ սերունդիդ եւ ի քեզ ակնդէտ ու  
տառապող եղբայրներուդ համար :

Օ՛, փառք քեզի, եւ փառք չանթամարտ հաղարտու-  
թեանը քու լեռներուդ,

Կարծես անոնց ապառաժներուն յաւիտենական տար-  
բերէն են կառուցուած՝

Անպարտելի հասակները քու սեւահեր ու հրաչուի  
որդիներուտ,

Քու անտառներուտ ահազնաթափ փոթորիկը գի-  
շերական . . .

Անոնց զինւորեալի կուրծքերուն մէջ իր հոկայտ-  
կան հեւքը դրաւ .

Քու հովանուերդ Անոնց քայլերուն առջև Յոյսին  
ճամբաներուն պէս կանանչացան . . .

Եւ քու հովմերդ Անոնց շունչն մէջէն փրկութեան  
ժամը չեփորեցին :

Քու ծոցիդ մէջն է, քու սրտիդ վրան է, քու արե-  
գակիդ տակն է,

Եւ հարազատ եւ անպարտելի եւ անլեներ զան-  
գուածը մնը հինաւուրց Ազգին,

Մեր նաեւմացեալ ճակատները այդտեղ էր որ վեր-  
ջապէս իրենց մութէն սրայծառացան ,

Սյդտե՛ղ էր, որ սկսաւ պայքարի սուրերուն  
ամէնէն արդարը չողալ,

Սյդտե՛ղ էր, որ ժողովուրդը իր իրաւունքը իր  
կուուփովը սպահանջեց ,

Սյդտե՛ղ էր, որ Սն չի լացաւ, չի ծնրազրեց եւ իր  
գլուխը հողին չի հասաւ ,

Սյդտե՛ղ էր, որ կատաղութեամբ զարկաւ եւ հպար-  
տօրէն զարնուեցաւ ,

Սյդտե՛ղ էր, որ արդարութիւնն որոտացողի իր ճա-  
կատը փառակերտ՝

Արեւմուտքի աշխարհներուն դիմաց ջահերու պէս  
ցոլացուց ,

Այդտեղ էր, որ իր անէծքի և պժդանքի թուքը  
թագակրին նետեց ,

Եւ այդտեղ էր, որ վերջապէս Անիրաւութիւնը օր  
մը ամօթահար պարտուեցաւ ,

Եւ քեզի համար, այդտեղ է, որ այսուհետեւ կու-  
թողները Փառքին ,

Մարմար առ մարմար սերունդիդ ձեռքերովը սի-  
տի բարձրանան . . .

Զա՛րկ, կոլկաս, աւերակեալ ու արցունքոտ Հայաս-  
նին աչքերը քեզի կը նային .

Ան գիտէ, որ քու թշնամիդիդ ատելութիւնը իր  
թշնամիներէն է որ կը բղիսի ,

Երբ իր գերեզմանին մոխիրը իր գումարան հովե-  
րուն հետ եկաւ ճամբաներդ սգաւորել ,

Երբ իր արիստը եկաւ քու եղբայրական տանդ սե-  
մերը թրջել ,

Երբ իր կոտրած բաղուկը քու կտրիճի ձեռքե-  
րուդ ի լսնդիր քեզի դողդոջեցաւ ,

Թշնամին նոյնն էր այն ատեն, այն որ այսօր, քու  
պաշտպանի բաղուկէն դարհուրած՝

Կուզէ զայն ջախջախել, կարենալ տօնելու համար  
վերջնական մահացումը մեր Ցեղին . . .

Ուրեմն զա՛րկ, կոլկաս, թէեւ գիտեմ որ քու ասպե-  
տական ձեռքերուդ հարուածին անարժան է նա՛ ,

Զա՛րկ, թէեւ գիտեմ որ քու սուրիդ վեհութիւնը  
պէտք չէ՛ր արատաւորել ,

Այդ անբաններու խուժանին թունաւոր ու պժդալից  
արիւնէն . . .

Զա՛րկ թէեւ գիտեմ որ հերոսները հերոսներու-  
միայն կրնան ընդհարուիլ ,

Զա՛րկ, սա անարդ ձակատագիրը ջախջախելու եւ  
Զարիւնը ըմբերանալու համար ,

Զա՛րկ, որովհետեւ ամէն Յոյս դՔեղ կը յուսայ եւ  
ամէն Ապագայ դՔեղ կը պաղատի ,

Զա՛րկ, վասնդի ամէն Ազատութիւն ու ամէն Արեւ-  
քու հարուածիդ կայծերէն պիտի ծնանին .

Զա՛րկ, Քու անթառամ սիրոյդ եւ ատելութեանդ  
չափին խորութեանը համեմատ .

Զա՛րկ, զա՛րկ, ահաւասիկ հորիզոնները կը կապոյտ-  
նան, ահաւասիկ Առաւօտները կը ձեղքուին ,

Զա՛րկ, աղատարեր հարուածիդ շունդը Մասիսէն  
—ի Տաւրոսև մինչեւ Հայրենիքին խորերը կը թնդայ :

## ԱՐԱԲԵԿԻՉՆԵՐ

Ը.

ԵՒ ԱՅՍՄԻՍ ձեր արդարակշիռ և երկաթեղէն ձեռ-  
քերն անզարտելի ,

Զեր զինավառ ու կրակոտ կուրծքերէն կատաղաբար  
մեկնելով՝ ,

Դաւադրութիւնն և Ոճիրը անողորմ հարուածով մը  
դէպի հողը կը միսրձեն . . .

Ո՞չ , ի՞նչպէս մօտենալ ձեր Սարսափին , ի՞նչպէս եր-  
գել , ի՞չպէս ջատագովել , ի՞նչպէս շեփորել  
զձեղ ,

Դուք ինքնիշխան և գերագոյն դատաւորներդ բոլոր  
արիւնքերան բռնապետներուն . . .

Ու նոյն իսկ չեմ գիտեր ձեր զարհուրանքի և պա-  
կուցումի անուններն ահաւոր ,

Թրովնետե ձեր յաղթական անցքը Ճշմարտապե-  
տութեան ճամբուն վրայէն ,

Այնչա՞փ սրագ է, այնչա՞փ խորտակիչ, այնչա՞փ  
կուրցնող և այնչա՞փ աւերիչ .

Որչա՞փ անցքը խաւարակուռ անտառները մոխրա-  
ցնող վայրկենական կայծակներուն . . .

Դուք մեր տառապանքին և մեր կոիւն երկարատե-  
տարիներէն ի վեր,

Աննուածելի պարխապները հանդիսացաք մեր քայ-  
լերը կոտորող բոլոր թշնամիներուն հանդէս՝  
Եւ բռնակալութեան քաղաքներուն և անոնց հրա-  
պարակներուն վրայ,

Երբ մեր դիակը փողոտուելէն մեր տաք արիւնը կը  
հոտոտուէր . . .

Ահաւասի՛կ որ ձեր խրոխտ հասակները միսմինակ և  
հերոսարար աշտարակուեցան . . .

Չեր քայլերը մեռելասլատ փողոցներուն մէջ վրէ-  
մին աղաղակը գոռացուցին,

Չեր սուրերուն հալածանքէն բոլոր դաւաճանները  
եղբայրադաւներուն հետ գերեզմանուեցան,

Ու ձեր ճակատի և անվեհեր ու անվախ ու  
հպարտ երևումէն,

Ծնրադիր խուժանը վատերուն՝ ձեր ոտքերուն կառ-  
չելով իրենց կեանքը հայցեցին . . .

Ու գեռ երէկ, ձեր ահարեկչի ոռոմքերը մարդաս-  
պաններու թափօրներ մոխրացուցին . . .

Բարբարոսներու այդ խելացնոր վոհմակներուն մէջ  
վար թաւալող արեգակներու նման պայթելով . . .

Սյապէս, ձեր արդարախոյզի արիւնասեռ լապտեր-  
ները ձեր ձեռքերէն առկախ,

Քոլոր խաւարչտին և եղեռնական հոգիներուն գոց-  
ուած դուռներէն ներս խուժեցիք,

Թնչպէս Խղճմատանքը, որուն ճշմարտագէտ նայուած-  
քը վախճան մըն է միայնզամայն . . .

Դուք Օրէնքը եղաք եղեռնապաշտ Զարիքին ուսե-  
րուն վրայ հսկող,

Եւ հայրենի ամէն յուղում, ամէն խռովք, ամէն  
հեռ ու ամէն վրէժ,

Չեր նժարին մէջ կշռուեցաւ եւ ձեր արդարասպաս  
ատեանին սեղանին վրայ յայտնուեցաւ . . .

Դուք ո՛չ զինակիցներ ունեցաք եւ ո՛չ ձեր հաւատ-  
քին վրայ իշխողներ,

Դուք, — դուք ձեր անձն էիք անսահմանօրէն եւ ձեր  
արփաթեւ հոգին,

Չեր եպը գերադոյն մարդուն եան է ամէն զօրու-  
թենէ գերիվեր,

Զեր վճիռը ամէն վճոի մահալճիւն է անողոք,  
Եւ վայ անսնց, որնք ձեր կարմիր և մահացու կնի-  
քով կը խարանուին...

Եւ մինչեւ այսօր մեր բոլոր թշնամիները տեսան որ  
ձեր վրիժածայնը զարհուրաբերի,  
Արդարութեան ձայնն էր աստուածագոչ՝ ինչպէս  
ձայնը Աղատութեան,  
Տեսա՞ն որ ձեր անխնայ սուրը, սուրն էր անխու-  
սախիւլի ճակատագրին,  
Տեսա՞ն որ ձեր դաշոյնները, մնդասարտ վիզերու ի  
խնդիր, նորէն կը շողան,  
Տեսա՞ն որ ձեր բռունցքին հարու ածներուն տակ  
մատանիչներուն կզակները կը կափկափին...  
Տեսա՞ն որ ձեր կապարէ գնդակները մարմինէ մար-  
մինէ և ուղեղէ ուղեղ կ'անցնին...  
Տեսա՞ն որ իրենց ծոծրաբներէն և սրտերէն, մեր  
ծարաւի աչքերուն առջեւ, իրենց արիւնն է որ  
կը ժայթքի,  
Հեղեղօրէն, հեղեղօրէն, իրենց հեռաւոր դահա-  
կալներն ու մահաղէմ թագակիլները թըր-  
ջելով...

Տեսա՞ն որ իրենց ուկորները կը ջախջախուին և  
իրենց ողնաշարները կը սղոցուին,

Տեսա՞ն թէ այն զլուխները որ գիշերներով մեր ցե-  
ղին անէացումը յլացան,

Տեսա՞ն, որ ձեր պղինձէ կրունկներուն դօրութեանը  
տակ է որ կը խմորուին..

Տեսա՞ն որ այսպէս, քաղաքէ քաղաք եւ հրապարակէ  
հրապարակ և հորիզոնէ հորիզոն,

Զեր յանկարծական երևումը, ձեր բաղկահարու-  
ածը և ձեր յարուցած խոռվքն անմեկին,

Բոլոր դաւաճանները դիակնացուց, բոլոր վասակները  
հողեց եւ մարդակեր ամրոխներ քարացուց...

Բայց դեռ մա՞ն պէտք է որոտանք, մա՞ն պէտք է  
համասփռենք, մա՞ն պէտք է մրրկենք,

Այն ատելութեան եւ ամրարշտութեան չարաշուք  
պալատներուն վրայ,

Որոնց զանգուածներուն տակ իրը հիմնաքար մեր  
ցեղին մտածումը և մարմինը և հողին է որ  
կը հեայ...

Որոնց որմերը մեր արլ ւնովն է շաղախուած և մեր  
ոսկորներովը կառուցուած...

Որոնց աղբիւրները մեր անօգուտ արցունքներէն են  
առատ ,  
Եւ զինովութեան ու եղեռնի բաժանները ձեռքէ  
ձեռք շրջող , մեր արիւնովն առլցուած ...  
Մահ պէտք է համասփռենք հոն , ուր մեր ստրուկի  
ծնրաղիր սպաղատանքները չի հասան .  
Բայց ուր ձեր սուրերուն բոցը մարդասպանները  
սառեցուց և անոնց ակուաները զահանդանքէ  
կրծտել առւաւ ...  
Մահ' այդ թաղակիր , բայց արդէն ահարեկեալ և  
կիսամեռ դահճապետներուն ,  
Վասն զի , իրենք , այդ արիւնկզակ և դիւահար ըըռ-  
նաւորները վախճանաւոր ,  
Զարհուրանքով լսեցին ձեր ձայնը , ձեր բարկու-  
թիւնը , ձեր ցասումը , ձեր զայրոյթն ահաւոր ...  
Եւ իրենց խորտակեալ և դադաղակերտ գահերը  
շարժեցան ,  
Ուժանակներու գոռումէն , ինչպէս գոռումէն փըր-  
կարար ոռումբերուն ,  
Զեր վերահաս երեսումը իրենց սրտերը կը մահա-  
զանգէ և իրենց ոճրագործի ուղեղները կ'ա-  
րիւնէ ,

Իրենց կմախաձե ձեռքերը այլեւ մահուան սարսու-  
ռովն է որ կը դողդոչէն ...  
Իրենց զիւերասարսափ երաշներուն մէջ ձեր անձը  
իր երկաթէ քինայոյդ քայլերովն է որ կ'ար-  
շաւէ ...  
Եւ ահաւասիկ իրենց դարաւոր դուռները ահագ-  
նարար և պատէ ի պատ կը ծեծուին ,  
Եւ ահաւասիկ իրենց պատուհաններուն բոլոր փեղ-  
կերը յառաջացող վտանգէն իրենց վրայ ահե-  
ղութեամբ մը փակուելով՝  
Դուրսէն եկող ամէն յօյս կը չքանայ իրենց համար  
և խաւարին մէջ Մահն է որ անոնց հոգիէն  
ի վեր կը կառչի ...  
Ուրեմն ոտքի' , նորէն ոտքի' , նորէն ոտքի' , Հայոր-  
դինե՛ր , Դիւցազունե՛ր , Ազատաբերներ ,  
Ոտքի' , և օդերուն մէջ թո՛ղ ցնդին օդերուն մէջ  
թո՛ղ մոխրանան ,  
Մեր Դահճներուն սա՛ պատժապարտ պալատներն ա-  
րիւնաթոր ...

1905 Ժընէվ



«Ազգային գրադարան



NL0357707

**ՀԵՊԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

---

Դիւցազնուէն	. . . . .	Մայակած	)	1902	Փարիզ
Հայուղիները	Ա. Շորf ( սպառած )			1905	Ժրմել
Հայուղիները	Բ. Շորf ( սպառած )			1906	Ժրմել
Հոգևարքի և Օսյոի Զամեր	. . ( սպառած )			1907	Փարիզ
Հայուղիները	Գ. Շորf . . . . .			1908	Փարիզ

Սոյն գրենքը յաջորդաբար լոյս պիտի ահանեն Պարոյ մէջ  
Եւկրու Տախուրդիամը :

---

**ՊԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Մ'ՀՅ Ե՞ն**

**Ծվեճամայր**

Խոհանոցի Խռովուանի

Մասնաւմի և Կենացի Ցանութե

Հայուղիները ( Վերջին Շորf )

Սուրուփ / Տռամերգութիւն /

Թաւուիրայ մէջ 5 զրուժ. Խռովուան 35 կոպեկ. Եւերիկոյ 25 մար.  
Եւրոպոյ և Արևին մարտեւ 3 թուոն.

---

**Դիմել բայր գրամալինակներուն**

Կեղրուանեղի՝ ԱՐՄԵՆ ԺՐԴԱՆԱՐԴՈՒՅՆ ԳՐԱՎԱՀԱՀՈՎԱՑՈՒԽ

4. Պայխ Մարտունիուրան թիւ 22